

Մանդելլ-Ֆլեմինգի մոդելը

Ռոբերտ Մանդելլի ու Ջեյմս Ֆլեմինգի կողմից 1960-ականների առաջին կեսում մեկը մյուսից անկախ հրապարակված հոդվածներում առաջադրված գաղափարներին վիճակված էր դառնալ բաց տնտեսության առ այսօր ամենից ավելի ազդեցիկ մակրոտնտեսական մոդելը: Մոդելի հիմքում ընկած են քեյնսյան մոտեցումները՝ այն ընդլայնմամբ, որ կապիտալի միջազգային հոսքերին տրվեց կենտրոնական դեր, որով դեռ 1960-ականների սկզբում նախորոշվեց կապիտալի միջազգային հոսքերի շարունակաբար կարևորվող դերը առանցքային մակրոտնտեսական փոփոխականների՝ իրական եկամտի, զբաղվածության, գների, տոկոսադրույքի որոշման խնդրում:

Մանդելլ-Ֆլեմինգ մոդելի առանցքը կազմում են IS , LM և BP ուղիղները, որոնք համապատասխանաբար բնութագրում են ապրանքների, փողի և արտարժույթի շուկաների հավասարակշռությունը:

Հավասարակշռությունը ապրանքների շուկայում՝ IS ուղիղ

Ապրանքների շուկայի հավասարակշռման պայմանը արտահոսքի և ներհոսքի հավասարությունն է. բաց տնտեսությունում արտահոսքը բնութագրվում է խնայողություններով ու ներմուծմամբ, իսկ ներհոսքը՝ ներդրումներով, պետական գնումներով և արտահանմամբ.

$$S + M = I + G + X$$

որտեղ S -ը խնայողությունն է, M -ը ներմուծումը, I -ն ներդրումները, G -ն պետական գնումները և X -ը արտահանումը:

Վերջինս ուղղակիորեն հետևում է մակրոտնտեսական հիմնական նույնությունից՝ $Y = C + I + G + X - M$, և այն փաստից, որ ազգային եկամտի ու մասնավոր սպառման տարբերությունը կազմում է խնայողությունը՝ $Y - C = S$:

Մոդելում խնայողությունն ու ներմուծումը համարվում են դրականորեն կախված եկամտից.

$$S = S_a + sY$$

որտեղ S_a -ն ավտոնոմ խնայողությունն է, իսկ s -ը՝ խնայողությունների սահմանային դրույքը,

$$M = M_a + mY$$

որտեղ M_a -ն ավտոնոմ ներմուծումն է, իսկ m -ը՝ ներմուծման սահմանային դրույքը:

Պետական գնումները և արտահանումը համարվում են արտաձին:

Իսկ ներդրումները համարվում են հակադարձ կախված տոկոսադրույքից.


$$I = I(r), \quad \frac{dI}{dr} < 0$$

Նկարագրված կախվածությունները ներկայացված են Գրաֆիկ 85-ում: Երրորդ քառորդում տարված կիսորդն արտահայտում է ներհոսքի և արտահոսքի հավասարությունը: Չորրորդ քառորդում նկարագրված է եկամտի ու արտահոսքի դրական կախվածությունը. երբ եկամուտն աճում է՝ խնայողությունն ու ներմուծումը նմանապես աճում են, իսկ ուղղի թեքման անկյունը հավասար է $(s + m)$: Երկրորդ քառորդում ներկայացված է ներհոսքի և տոկոսադրույքի հակադարձ կախվածությունը. տոկոսադրույքի կրճատման դեպքում ներդրումներն աճում են, իսկ պետական գնումներն ու արտահանումը տոկոսադրույքից անկախ են:

Այսպիսով՝ եկամտի Y_1 մակարդակը պայմանավորում է L_1 արտահոսք, իսկ տնտեսության իրական հատվածի հավասարակշռման համար անհրաժեշտ է դրան հավասար In_1 ներհոսք, ինչը, առկա գների և սպասումների համար, հնարավոր է միայն r_1 տոկոսադրույքի դեպքում: Արդյունքում եկամուտ-տոկոսադրույք հարթությունում Y_1 եկամուտն ու r_1 տոկոսադրույքը որոշում են a կետը: Համանմանորեն որոշվում է նաև b կետը: Այդ կետերով անցնող IS ուղիղն էլ բնութագրում է իրական հատվածի, այն է՝ ապրանքների շուկայի հավասարակշռությունը:

IS -ը վարընթաց է, քանի որ եկամտի աճը բերում է արտահոսքի աճին, և, հետևաբար, անհրաժեշտ է տոկոսադրույքի նվազում՝ բավարար ներդրումներ ապահովելու և ներհոսք-

Գրաֆիկ 85: IS ուղղի դուրս բերումը



արտահոսք հավասարությունը պահպանելու համար:

IS ուղիղը տեղաշարժվում է աջ, երբ ընդլայնվում են ներդրումները, պետական գնումները կամ արտահանումը, քանի որ ներհոսքի բաղադրիչների նշյալ ընդլայնումը պահանջում է եկամտի ավելի բարձր մակարդակ՝ համարժեք արտահոսք ապահովելու համար՝ ի դեմս խնայողությունների ու ներմուծման աճի: IS ուղիղը աջ է տեղաշարժվում նաև արժույթի արժեզրկման դեպքում, պայմանով, որ Մարշալ-Լերնեի պայմանը տեղի ունի, քանի որ այդ դեպքում արժույթի արժեզրկումը ընդլայնում է արտահանումը և կրճատում է ներմուծումը, որի արդյունքում ներհոսքը գերազանցում է արտահոսքին և, հետևաբար, անհրաժեշտ է եկամտի աճ՝ հակակշռող արտահոսք ապահովելու համար:

Հավասարակշռությունը փողի շուկայում՝ LM ուղիղ

Փողի շուկան հավասարակշռվում է, երբ փողի առաջարկը հավասարվում է փողի պահանջարկին: Փողի առաջարկը որոշում է կենտրոնական բանկը: Իսկ փողի պահանջարկը պայմանավորվում է գործարքային պահանջարկով և փողի՝ որպես ակտիվի նկատմամբ պահանջարկով: Ընդհանուր դեպքում որքան բարձր է եկամուտը, այնքան մեծ է գործարքային նպատակով փողի պահանջարկը, քանի որ բարձր եկամտի դեպքում մեծ են նաև ծախսերը և, հետևաբար, գործարքների կատարման համար ավելի շատ փող է անհրաժեշտ:

$$M_{tr} = M_{tr}(Y) \quad \frac{dM_{tr}}{dY} > 0$$

որտեղ M_{tr} -ն փողի նկատմամբ գործարքային պահանջարկն է:

Փողի՝ իբրև ակտիվի նկատմամբ պահանջարկը որոշվում է մնացորդային սկզբունքով, որպես փողի ընդհանուր պահանջարկի և գործարքային պահանջարկի տարբերություն: Այն հակադարձ կախված է տոկոսադրույքից, քանի որ տոկոսադրույքի բարձրանալու դեպքում փող պահելու այլընտրանքային ծախսը մեծանում է:

$$M_{sp} = M_{sp}(r) \quad \frac{dM_{sp}}{dr} < 0$$


որտեղ M_{sp} -ն փողի՝ իբրև ակտիվի նկատմամբ պահանջարկն է:

Հավասարակշռության վիճակում փողի պահանջարկը հավասար է փողի առաջարկին:

$$M_D = M_{tr} + M_{sp} = M_S$$

LM ուղիղի դուրս բերումը պատկերված է Գրաֆիկ 86-ում: Չորրորդ քառորդում պատկերված է փողի գործարքային պահանջարկի՝ եկամտից ուղիղ կախվածությունը: Երրորդ քառորդում՝ կենտրոնական բանկի կողմից որոշվող փողի առաջարկը, որի թեքման անկյամբ պայմանավորված փողի պահանջարկը բաշխվում է գործարքային ու իբրև ակտիվի

Գրաֆիկ 86: LM ուղղի դուրս բերումը



նկատմամբ պահանջարկների միջև: Երկրորդ քառորդում պատկերված է փողի՝ իբրև ակտիվի նկատմամբ պահանջարկի և տոկոսադրույքի հակադարձ կախվածությունը:

Այսպիսով, ազգային եկամտի Y_1 մակարդակը պայմանավորում է փողի M_{tr1} գործարքային պահանջարկ, որին, փողի տրված M_S առաջարկի դեպքում, համապատասխանում է փողի՝ իբրև ակտիվի M_{sp1} պահանջարկ, որն էլ հնարավոր է միայն r_1 տոկոսադրույքի դեպքում: Արդյունքում եկամուտներ-տոկոսադրույք հարթությունում Y_1 եկամուտն ու r_1 տոկոսադրույքը որոշում են a կետը: Համանմանորեն որոշվում է նաև b կետը: Այդ երկու կետերով անցնող LM ուղիղն էլ բնութագրում է փողի շուկայի հավասարակշռությունը: LM ուղիղը վերընթաց է, քանի որ եկամտի բարձրացումը բերում է փողի գործարքային պահանջարկի մեծացմանը, իսկ փողի տրված առաջարկի դեպքում փողի շուկան հավասարակշռության վիճակում պահելու համար անհրաժեշտ է, որ կրճատվի փողի՝ իբրև ակտիվի նկատմամբ պահանջարկը, ինչը հնարավոր է միայն տոկոսադրույքի բարձրացման դեպքում:

LM ուղիղը աջ է տեղաշարժվում, երբ փողի առաջարկը ընդլայնվում է, քանի որ տրված տոկոսադրույքի դեպքում փողի շուկան հավասարակշռության վիճակում պահելու համար անհրաժեշտ է, որ եկամտի աճի՝ փողի գործարքային պահանջարկը ընդլայնելու համար: Արժույթի արժեզրկումը LM ուղիղը տեղաշարժում է ձախ, քանի որ արժեզրկումը բարձրացնում է գների ընդհանուր մակարդակը, որի հետևանքով մեծանում է փողի նկատմամբ պահանջարկը, ինչը հակակշռելու համար անհրաժեշտ է, որ եկամուտը կրճատվի, քանի որ այն կկրճատի փողի գործարքային պահանջարկը:

Հավասարակշռությունը արտարժույթի շուկայում՝ BP ուղիղ

Արտարժույթի շուկայի հավասարակշռությունը մոդելում դիտարկվում է վճարային հաշվեկշռի հավասարակշռման առումով:

Հիշենք, որ վճարային հաշվեկշիռը ունի երեք հիմնական բաղադրիչ՝ ընթացիկ հաշիվ, կապիտալի ու ֆինանսական հաշիվ և պաշտոնական ռեզերվներ: Համարվում է, որ արտարժույթի շուկան հավասարակշռված է, եթե պաշտոնական ռեզերվների փոփոխման անհրաժեշտություն չկա. այսինքն, եթե ընթացիկ հաշիվը պակասորդային է, ապա կապիտալի ու ֆինանսական հաշիվը նույն չափով ավելցուկային է ու հակառակը:

Ընթացիկ հաշիվը ներկայացվում է իբրև արտահանման ու ներմուծման տարբերություն:

$$CAB = X - M$$

Արտահանումը, ինչպես նշվեց, մոդելում համարվում է արտածին փոփոխական, իսկ ներմուծումը կախված է եկամտից:

$$M = M_a + mY$$

Հետևաբար՝ ընթացիկ հաշվի և եկամտի միջև առկա է ուղիղ կախվածություն. որքան մեծ է եկամուտը, այնքան մեծ է ընթացիկ հաշվի պակասորդը կամ փոքր է ընթացիկ հաշվի ավելցուկը:

$$CAB = CAB(Y) \quad \frac{dCAB}{dY} > 0$$

Երբ տնտեսությունը փոքր է, ապա արտաքին տոկոսադրույքը՝ r^* , նրա համար տրված մեծություն է: Հետևաբար, կապիտալի գուտ հոսքը կախված է միայն ներքին տոկոսադրույքից՝ r . որքան բարձր է ներքին տոկոսադրույքը, այնքան մեծ է կապիտալի գուտ ներհոսքը կամ փոքր է կապիտալի գուտ արտահոսքը.

$$K = K(r - r^*)$$


Վճարային հաշվեկշիռը հավասարակշռված է, եթե ընթացիկ հաշվի ու կապիտալի հաշվի գումարը՝ առանց պաշտոնական ռեզերվների, զրո է

$$CAB + K = 0$$

Երբ K -ն դրական է, ապա կապիտալը ներհոսում է, իսկ երբ բացասական է, ապա կապիտալը արտահոսում է: Նկատենք՝ երբ պաշտոնական ռեզերվները զրո են ու կապիտալի հաշիվը դրական է, ապա ընթացիկ հաշիվը բացասական է և հակառակը:

BP ուղղի դուրս բերումը ներկայացված է Գրաֆիկ 87-ում: Չորրորդ քառորդում պատկերված է եկամտի ու ընթացիկ հաշվի կախվածությունը. եկամտի աճին զուգընթաց ընթացիկ հաշիվը

Գրաֆիկ 87: BP ուղղի դուրս բերումը



դառնում է պակասորդային: Երրորդ քառորդում տարված կիսորդը արտահայտում է ընթացիկ հաշվի և կապիտալի հաշվի հավասարությունը. երբ ընթացիկ հաշիվը պակասորդային է, ապա նույնքան կապիտալ ներհոսում է, իսկ երբ ընթացիկ հաշիվը ավելցուկային է, ապա նույնքան կապիտալ արտահոսում է: Երկրորդ քառորդում պատկերված է կապիտալի հաշվի ու տոկոսադրույքի կախվածությունը. բարձր տոկոսադրույքի դեպքում կապիտալը ներհոսում է, ցածր տոկոսադրույքի դեպքում՝ արտահոսում:

Այսպիսով՝ եկամտի Y_1 մակարդակի դեպքում ընթացիկ հաշիվը ավելցուկով է՝ CAB_1 , և, հետևաբար, որպեսզի վճարային հաշվեկշիռը հավասարակշռվի, անհրաժեշտ է, որ K_1 քանակի կապիտալ արտահոսի, ինչն էլ հնարավոր է r_1 տոկոսադրույքի դեպքում: Իսկ երբ եկամուտը Y_2 մակարդակում է, ապա ընթացիկ հաշիվը պակասորդային է՝ CAB_2 , որին համապատասխան, վճարային հաշվեկշիռը հավասարակշռելու համար, անհրաժեշտ է կապիտալի K_2 ներհոսք, ինչն էլ հնարավոր է r_2 տոկոսադրույքի դեպքում:

Արդյունքում եկամուտներ-տոկոսադրույք հարթությունում Y_1 եկամուտն ու r_1 տոկոսադրույքը որոշում են a կետը, իսկ Y_2 եկամուտն ու r_2 տոկոսադրույքը՝ b կետը: Այդ երկու կետերով անցնող BP ուղիղն էլ բնութագրում է արտարժույթի շուկայի հավասարակշռությունը: BP ուղիղը վերընթաց է, քանի որ եկամտի բարձրացման դեպքում ընթացիկ հաշիվը վատթարանում է, ինչը հակակշռելու համար անհրաժեշտ է կապիտալի արտահոսքի նվազեցում կամ կապիտալի ներհոսքի մեծացում, որն էլ հնարավոր է միայն տոկոսադրույքի բարձրացման դեպքում:

BP ուղիղից ձախ գտնվող տիրույթում վճարային հաշվեկշիռը ավելցուկային է, քանի որ եկամտի տրված մեծությամբ պայմանավորվող ընթացիկ հաշվի համար տոկոսադրույքը

ավելին է, քան անհրաժեշտ է վճարային հաշվեկշիռը հավասարակշռելու համար, որով պայմանավորված կա՛մ կապիտալի ներհոսքն է ավելին, կամ արտահոսքն է փոքր: BP ուղղից աջ գտնվող տիրույթում վճարային հաշվեկշիռը պակասորդային է, քանի որ տրված ընթացիկ հաշվի համար կա՛մ կապիտալի արտահոսքն է ավելին, կա՛մ ներհոսքն է փոքր, քան անհրաժեշտ է վճարային հաշվեկշիռը հավասարակշռելու համար:

BP ուղղի թեքման անկյունը որոշվում է կապիտալի միջազգային մոբիլության աստիճանով: Որքան ավելի մոբիլ է կապիտալը, այնքան ավելի հարթ է BP ուղիղը, քանի որ եկամտի տրված աճի համար, որը բերում է ընթացիկ հաշվի վատացման, ներքին տոկոսադրույքի համեմատաբար փոքր աճ է անհրաժեշտ կապիտալի անհրաժեշտ ներհոսք ապավելու համար: Հակադարձորեն, երբ կապիտալը նվազ մոբիլ է, ապա BP ուղիղը ավելի ուղղահայաց է: Ծայրահեղ տարբերակում, երբ կապիտալը կատարյալ մոբիլ է, ապա BP ուղիղը հորիզոնական է, իսկ երբ կատարյալ ոչ մոբիլ է, ապա BP ուղիղը ուղղահայաց է:


BP ուղիղը աջ է տեղաշարժվում արժույթի արժեզրկման դեպքում, պայմանով, եթե Մարշալ-Լեոներ պայմանը տեղի ունի: Արժույթի արժեզրկումը մեծացնում է արտահանումը և նվազեցնում է ներմուծումը, հետևաբար, անհրաժեշտ է եկամտի աճ՝ վճարային հաշվեկշիռը հավասարակշռելու համար:

Մոդելի հավասարակշռությունը

Հավասարակշռությունը պատկերված է Գրաֆիկ 88-ում, որում բոլոր երեք ուղիղները հատվում են միևնույն կետում: Սակայն, դա անպայմանորեն չի նշանակում, թե տնտեսությունում առկա է ներքին հավասարակշռություն, այսինքն՝ ռեսուրսներն ամբողջովին զբաղված են: Մասնավորապես, ինչպես ցույց է տրված Գրաֆիկում, լրիվ զբաղվածությանը համապատասխանող եկամտի մակարդակը Y_F -ն է, այնինչ, մոդելի հավասարակշռությանը համապատասխանող եկամտի Y_1 մակարդակը դրանից ցածր է:


Չնայած ներքին *անհավասարակշռությանը*, երբ IS, LM ուղիղները հատվում են BP ուղղի վրա, ապա արտաքին հավասարակշռություն միշտ առկա է: Հակառակ դեպքում, եթե դրանք BP

Գրաֆիկ 88: Մանդելլ-Ֆլեմինգ մոդելի հավասարակշռությունը




Գրաֆիկ 89: Արտաքին
անհավասարակշռությունը Մանդելլ-
Ֆլեմինգ մոդելում

(ա) վճարային հաշվեկշիռը
պակասորդով է, քանի որ IS, LM
ուղիղները հատվում են BP -ից ձախ:



(բ) վճարային հաշվեկշիռը ավելցուկով
է, քանի որ IS, LM ուղիղները հատվում
են BP -ից աջ:



ուղղի վրա չհատվեին, ապա վճարային հաշվեկշիռը կլիներ կա՛մ պակասորդով, կա՛մ ավելցուկով (Գրաֆիկ 89):

Մակրոտնտեսական քաղաքականության ազդեցությունը

Մոնետար քաղաքականություն: Ընդլայնող մոնետար քաղաքականություն իրականացնելու դեպքում կենտրոնական բանկը բաց շուկայում գնում է պետական պարտատոմսեր, որի արդյունքում պարտատոմսերի գինը բարձրանում է: Իսկ քանի որ պարտատոմսերի գինը և տոկոսադրույքը հակադարձ են կախված, ապա տոկոսադրույքը նվազում է: Վերջինս իր հերթին ընդլայնում է ներդրումները, որն էլ մուլտիպլիկատիվ ազդեցություն է ունենում թողարկման և, հետևաբար, եկամտի վրա: Սակայն, եկամուտների աճը բացասաբար է անդրադառնում ընթացիկ հաշվի վրա, քանի որ մեծացնում է ներմուծումը (հիշենք, որ արտահանումը մոդելում համարվում է արտածին փոփոխական), իսկ տոկոսադրույքի նվազումը բերում է կապիտալի արտահոսքին: Արդյունքում և՛ ընթացիկ հաշիվը, և՛ կապիտալի հաշիվը վատթարանում են և, հետևաբար, մոնետար ընդլայնումը վճարային հաշվեկշիռը դարձնում է պակասորդային:

Հակադարձաբար, սահմանափակող մոնետար քաղաքականությունը, որ ուղեկցվում է պարտատոմսերի վաճառքով, բարձրացնում է տոկոսադրույքը, ինչը նվազեցնում է

ներդրումները և թողարկումը: Եկամուտների անկումն իր հերթին նվազեցնում է ներմուծումը, իսկ տոկոսադրույքի աճը նպաստում է կապիտալի ներհոսքին: Արդյունքում սահմանափակող մոնետար քաղաքականությունը բարելավում է ն՛ ընթացիկ հաշիվը, ն՛ կապիտալի հաշիվը, այսինքն՝ վճարային հաշվեկշիռը դարձնում է ավելցուկային:


Ֆիսկալ քաղաքականություն: Ընդլայնող ֆիսկալ քաղաքականությունը կառավարությունը կարող է ֆինանսավորել պարտատոմսերի վաճառքի միջոցով: Պետական գնումների աճը, թեպետ, մուլտիպլիկացիոն է ֆեկտով ընդլայնում է եկամուտը, սակայն, պարտատոմսերի վաճառքը նվազեցնում է պարտատոմսերի գինը ու բարձրացնում է տոկոսադրույքը: Վերջինս նվազեցնելով ներդրումները՝ մասամբ կհակակշռի եկամուտների ընդլայնմանը: Ինչ վերաբերում է վճարային հաշվեկշռին, ապա դրա վրա ընդլայնող ֆիսկալ քաղաքականության ազդեցությունը անորոշ է: Մի կողմից եկամտի աճը բացասաբար է անդրադառնում ընթացիկ հաշվի վրա, քանի որ ընդլայնում է ներմուծումը, մյուս կողմից տոկոսադրույքի բարձրացումը բերում է կապիտալի ներհոսքին: Նմանապես անորոշ է սահմանափակող ֆիսկալ քաղաքականության ազդեցությունը:

Արտարժույթային ներխուժում: Արտարժույթի շուկայի հավասարակշռման համար կենտրոնական բանկը կարող է իրականացնել արտարժույթային ներխուժում, այսինքն՝ վաճառել կամ գնել արտարժույթ: Ընդ որում, երբ ԿԲ-ն վաճառում է արտարժույթ, ապա դրա դիմաց գնում է ազգային արժույթ և, հետևաբար, շրջանառության մեջ գտնվող ազգային արժույթի քանակը կրճատվում է: Այդ առումով արտարժույթային ներխուժումները կարող են լինել ստերիլիզացված կամ չստերիլիզացված:

Ստերիլիզացված ներխուժման դեպքում ԿԲ-ն կրճատված դրամական բազան վերականգնում է նախկին մակարդակում, օրինակ՝ պետական պարտատոմսեր գնելու միջոցով: Չստերիլիզացված ներխուժման դեպքում դրամական բազան թողնում է կրճատված մակարդակում:

Այսպես, ենթադրենք տնտեսությունը սկզբնապես հավասարակշռված է e_1 կետում (Գրաֆիկ 90): ԿԲ-ն, որ վարում է ֆիքսված փոխարժեքի քաղաքականություն, որոշում է իրականացնել

Գրաֆիկ 90: Մոնետար ընդլայնումը ֆիքսված փոխարժեքի դեպքում



ընդլայնող մոնետար քաղաքականություն, օրինակ՝ նպատակ ունենալով ընդլայնել թողարկումը: Այդ դեպքում LM ուղիղը կտեղաշարժվի աջ, որի արդյունքում եկամուտը կաճի, տոկոսադրույքը կնվազի իսկ վճարային հաշվեկշիռը կդառնա պակասորդային: Վերջինս նշանակում է, որ տնտեսությունում արտարժույթի նկատմամբ կա ավելցուկային պահանջարկ և ԿԲ-ն ազգային արժույթի արժեզրկումը կանխելու համար ստիպված է իրականացնել արտարժույթային ներխուժում: Սակայն, շուկայում արտարժույթ վաճառելու դիմաց ԿԲ-ն բնականորեն գնում է ազգային արժույթ, որի հետևանքով դրամական զանգվածը կրճատվում է ու LM ուղիղը դարձյալ տեղաշարժվում է ձախ՝ դեպի նախկին մակարդակ: Դա չստեղծիլիզացված արտարժույթային ներխուժման օրինակ է: Իսկ եթե ԿԲ-ն ընտրեք ստեղծիլիզացման տարբերակը, ապա ի պատասխան արտարժույթային ներխուժման արդյունքում դրամական զանգվածի կրճատման՝ պետք է լրացուցիչ մոնետար ընդլայնում իրականացնեք, օրինակ՝ պարտատոմսերի վաճառքի միջոցով: Գրաֆիկորեն դա կնշանակվեք, որ LM ուղիղը ետ, դեպի ձախ չեք տեղաշարժվի: Սակայն, այդ դեպքում վճարային հաշվեկշիռի պակասորդը կպահպանվի և ԿԲ-ն հարկադրված կլինի շարունակական արտարժույթային ներխուժումներ կատարել՝ ազգային արժույթի արժեզրկումը կանխելու համար: Իսկ արտարժույթային ներխուժումները չեն կարող անվերջ շարունակվել, քանի որ ԿԲ-ի արտարժույթային ռեզերվները անսահմանափակ չեն և, հետևաբար, վերջին հաշվով ազգային արժույթը պետք է արժեզրկվի:


Հավասարակշռությունը ֆիքսված փոխարժեքի դեպքում

Ենթադրենք տնտեսությունը սկզբնապես հավասարակշռված է e_1 կետում, այսինքն՝ թեպետ վճարային հաշվեկշիռը հավասարակշռված է, սակայն, ռեսուրսները ամբողջովին զբաղված չեն, քանի որ ընթացիկ եկամուտը՝ Y_1 , փոքր է լրիվ զբաղվածությանը համապատասխանող Y_F մակարդակից:

Գործազրկությունը հաղթահարելու համար կառավարությունը իրականացնում է ֆիսկալ ընդլայնում՝ դա ֆինանսավորելով պարտատոմսերի վաճառքով. IS ուղիղը տեղաշարժվում է աջ՝ IS_1 -ից IS_2 : Նոր հավասարակշռությունը հաստատվում է e_2 կետում, ուր IS_1 ՝ եկամուտը, IS_2 ՝ տոկոսադրույքը ավելի բարձր են: Նկատենք, որ եկամտի Y_2 նոր մակարդակը գերազանցում է լրիվ զբաղվածությանը համապատասխանող Y_F մակարդակը: Բացի այդ e_2 կետում վճարային հաշվեկշիռը պակասորդային է, քանի որ եկամտի աճը բերել է ընթացիկ հաշվի վատթարացման, իսկ տոկոսադրույքի աճով պայմանավորված կապիտալի ներհոսքը բավարար չէ վճարային հաշվեկշիռը հավասարակշռելու համար, քանի որ կապիտալը բավարար մոբիլ չէ: Փաստորեն, կառավարությունը ֆիսկալ ընդլայնմամբ վերականգնեց ներքին հավասարակշռությունը՝ դրա փոխարեն խախտելով արտաքին հավասարակշռությունը:

Քանի որ ԿԲ-ն վարում է ֆիքսված փոխարժեքի քաղաքականություն, ապա ազգային արժույթի արժեզրկումը կանխելու համար ԿԲ-ն հարկադրված է իրականացնել

Գրաֆիկ 91: Հավասարակշռությունը ֆիքսված փոխարժեքի դեպքում



արտարժույթային ներխուժում: Եթե ԿԲ-ն ընտրի ստերիլիզացման ուղին, ապա LM ուղիղը կմնա LM_1 մակարդակում ու վճարային հաշվեկշռի պակասորդը կպահպանվի: Հետևաբար, արտաքին հավասարակշռությունը վերականգնելու համար ԿԲ-ն պետք է ստերիլիզացում չիրականացնի, որը համարժեք է մոնետար սահմանափակմանը:

Հետևաբար, միաժամանակ $և'$ ներքին, $և'$ արտաքին հավասարակշռությունը վերականգնելու համար կառավարությունը պետք է ընդլայնող ֆիսկալ քաղաքականությունը զուգորդի սահմանափակող մոնետար քաղաքականությանը, այնպես, որ վերջնական հավասարակշռությունը հաստատվի e_3 կետում:


Մոնետար սահմանափակումը մասամբ կրճատում է եկամուտը՝ բարելավելով ընթացիկ հաշիվը և բարձրացնում է տոկոսադրույքը՝ ապահովելով կապիտալի լրացուցիչ ներհոսք, արդյունքում վերականգնելով վճարային հաշվեկշռի հավասարակշռությունը:

Փաստորեն, կառավարությունը երկու գործիքների՝ մոնետար և ֆիսկալ, միաժամանակյա կիրառմամբ, առանց փոխարժեքի փոփոխման, կարող է վերականգնել միաժամանակ $և'$ ներքին, $և'$ արտաքին հավասարակշռությունը:

Հավասարակշռությունը տատանվող փոխարժեքի դեպքում

Մոնետար ընդլայնում: Մոնետար ընդլայնման դեպքում LM ուղիղը տեղաշարժվում է աջ՝ LM_1 -ից LM_2 (Գրաֆիկ 92): Արդյունքում e_2 կետում եկամուտն աճում է, իսկ տոկոսադրույքը նվազում, որի հետևանքով վճարային հաշվեկշռը դառնում է պակասորդային: Բայց քանի որ ԿԲ-ն վարում է տատանվող փոխարժեքի քաղաքականություն, ապա ի հետևանք վճարային հաշվեկշռի պակասորդի, ազգային արժույթը արժեզրկվում է, որի արդյունքում IS ուղիղը աջ է տեղաշարժվում՝ IS_1 -ից IS_2 , աջ է տեղաշարժվում նաև BP ուղիղը՝ BP_1 -ից BP_2 , իսկ LM ուղիղը տեղաշարժվում է ձախ՝ LM_2 -ից LM_3 : Վերջնական հավասարակշռությունը հաստատվում է e_3 կետում: Հանրագումարային՝ մոնետար ընդլայնումը տատանվող փոխարժեքի դեպքում հանգեցնում է արժույթի արժեզրկման, ներքին տոկոսադրույքի նվազման ու ազգային եկամտի բարձրացման:

Գրաֆիկ 92: Հավասարակշռությունը տատանվող փոխարժեքի դեպքում. մոնետար ընդլայնում




Փաստորեն՝ տատանվող փոխարժեքի և մոնետար ընդլայնման զուգորդումը կարող է վերականգնել միաժամանակ և՛ ներքին, և՛ արտաքին հավասարակշռությունը:

Ֆիսկալ ընդլայնում: Ֆիսկալ ընդլայնման ազդեցությունը դիտարկենք երկու տարբերակով, երբ կապիտալը բավական մոբիլ է, այսինքն՝ BP -ն LM -ի համեմատ հարթ է և երբ կապիտալը նվազ մոբիլ է, այսինքն՝ BP -ն LM -ի համեմատ ուղղաձիգ է:


Գրաֆիկ 93-ում BP -ն LM -ի համեմատ ուղղաձիգ է, այսինքն՝ կապիտալի հոսքերը նվազ առաձգական են տոկոսադրույքի փոփոխման նկատմամբ: Ֆիսկալ ընդլայնման դեպքում IS ուղիղը տեղաշարժվում է աջ՝ IS_1 -ից IS_2 : Եկամուտն ու տոկոսադրույքը բարձրանում են՝ վճարային հաշվեկշռի վրա ունենալով հակադարձ ազդեցություններ. բայց քանի որ կապիտալը հարաբերականորեն մոբիլ չէ, ապա վճարային հաշվեկշռը հավասարակշռության նոր e_2 կետում դառնում է դեֆիցիտային, քանի որ կապիտալի ներհոսքը չի բավարարում ընթացիկ հաշվի պակասորդը հավասարակշռելու համար:

Արդյունքում՝ ազգային արժույթը արժեզրկվում է և IS ուղիղը էլ ավելի աջ է տեղաշարժվում՝ IS_2 -ից IS_3 , BP ուղիղը նույնպես աջ է տեղաշարժվում՝ BP_1 -ից BP_2 իսկ LM ուղիղը տեղաշարժվում է ձախ՝ LM_1 -ից LM_2 : Վերջին հաշվով տոկոսադրույքի հետագա բարձրացումը և ազգային արժույթի արժեզրկումը վերացնում են վճարային հաշվեկշռի պակասորդը և նոր

Գրաֆիկ 93: Հավասարակշռությունը տատանվող փոխարժեքի դեպքում. ֆիսկալ ընդլայնում, երբ կապիտալը մոբիլ չէ



Գրաֆիկ 94: Հավասարակշռությունը տատանվող փոխարժեքի դեպքում. ֆիսկալ ընդլայնում, երբ կապիտալը մոբիլ է



հավասարակշռությունը հաստատվում է e_3 կետում:

Գրաֆիկ 94-ում BP -ն LM -ի համեմատ հարթ է, այսինքն՝ կապիտալի հոսքերը առաձգական են տոկոսադրույքի փոփոխման նկատմամբ: Ֆիսկալ ընդլայնման դեպքում IS ուղիղը տեղաշարժվում է աջ՝ IS_1 -ից IS_2 : Արդյունքում եկամուտն ու տոկոսադրույքը բարձրանում են՝ վճարային հաշվեկշռի վրա հակադարձ ազդեցություններով. բայց քանի որ կապիտալը մոբիլ է, ապա հավասարակշռության նոր e_2 կետում վճարային հաշվեկշիռը ավելցուկային է: Արդյունքում ազգային արժույթը արժեվորվում է և IS ուղիղը ձախ է տեղաշարժվում՝ IS_2 -ից IS_3 , BP ուղիղը նույնպես ձախ է տեղաշարժվում՝ BP_1 -ից BP_2 իսկ LM ուղիղը տեղաշարժվում է աջ՝ LM_1 -ից LM_2 : Վերջին հաշվով տոկոսադրույքի նվազումը և եկամտի կրճատումը վերացնում են վճարային հաշվեկշռի ավելցուկը և նոր հավասարակշռությունը հաստատվում է e_3 կետում:

Այսպիսով՝ ֆիսկալ ընդլայնումը, կարող է հանգեցնել ինչպես արժույթի արժեզրկման, երբ կապիտալը նվազ մոբիլ է, այնպես էլ արժույթի արժեվորման, երբ կապիտալը մոբիլ է: